

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂԵՔԱՆՈՒԹԻ ՄԱԿԵԿՈՆԱՑԻՅՈՒՆ

Հայկական խմբագրություններ, Աշխատասիրությամբ Հասմիկ Սիմոնյանի, ԿԱ հրատարակչություն, Երևան, 1989, 648 էջ:

Հայ հնագույն թարգմանությունների նշանակությունը հանրահայտ է: Նրանց արժեքը պայմանավորվում է այնու, որ լինելով բարձրորակ թարգմանական երկեր և պահպանված մեծ մասամբ աննշան աղավաղումներով, այսօր շատ հարցերում հնարավորություն են տալիս ճշգրտելու, հաճախ ամբողջացնելու դրանց բնագրերը, նպաստում քննական բնագրերի ստեղծմանը: Այս իրողությունը վերստին հավաստվում է հայ հին թարգմանություններին նվիրված ամեն մի նոր ուսումնասիրությամբ:

Հերթական այդպիսի մի հավաստում է «Պատմություն Աղեքսանդրի Մակեդոնացու» երկի հայերեն թարգմանության քննական քննագիրը, կազմված այսօր բանասիրությանը հայտնի՝ Երևանի, Վենետիկի, Երուսաղեմի, Վիեննայի, Պետերբուրգի, Բեռլինի հավաքածուներում պահվող ավելի քան վեց տասնյակ ձեռագրերի մանրակրկիտ ուսումնասիրությամբ: Այս թարգմանությունը, սակայն, բացստիկ երևույթ է հայ գեղարվեստական գրականության պատմության մեջ որպես համաշխարհային քաղաքակրթության ամենանշանավոր հուշարձաններից մեկի վերստեղծում, որ արգասավորվելու էր տարբեր փոփոխակներով ու խմբագրություններով: Ընդ որում, հետագոտողը նկատում է, թե թարգմանության համար Աղեքսանդրի վեպի ընտրությունը «սուռնանի» օժտված անհատի անձնական նախասիրությամբ ու ճաշակով պայմանավորված սոսկ գրական իրողություն» չէ, այլ արդյունք է թարգմանական իմաստուն քաղաքականության:

Հետագոտողներից ոմանք հավանում են Աղեքսանդրի պատմությունը համարելու հելլենիզմի կարևորագույն նվաճումներից մեկը: Նշանավոր այդ հուշարձանը արդեն ավելի քան մեկուկես հազարամյակ է, ինչ «վերապատվաստվել» է հայ իրականության մեջ, և առհասարակ հայոց Աղեքսանդրականը ամենահետաքրքրականներից է, որ բարեբախտաբար գտավ իր նվիրյալ հետազոտողին՝ Հասմիկ Սիմոնյանին, հետագոտողի, որի անունից առաջ բնութագրում է հենց նվիրվածությունը և հավատարմությունը նախընտրած նյութին: Արդեն երրորդ տասնամյակն է, ինչ նա համար ու համբերատար ւաշխատանք

ով քայլ առ քայլ լուծում է Պատմությանն առնչվող խնդիրներ, պատասխանում շուրջ երկու հարյուրամյակ հայ բանասիրությանը հուզած հարցերին, գիտական պարբերականներում, նստաշրջաններում ներկայացնում իր ուսումնասիրությունների արդյունքները, ի հայտ բերելով հայերեն թարգմանության նորանոր արժանիքներ, բացահայտում նրա հետ կապված բազում գաղտնիքներ: Այս նվիրվածությունն ու հետևողականությունը վարձատրել են հեղինակին լիովի, նրա ջանքերը պատվել են հաջողությամբ:

Գրեթե սպառիչ քննություն է կատարված և՛ թարգմանության ժամանակի, և՛ թարգմանչի ինքնության, և՛ վեպի անցած ճանապարհի, նրա առանձին հատվածների ու հանգրվանների վերաբերյալ, և՛ բոլոր այն հանգամանքների, որոնք այս կամ այն կերպ առընչվում են վեպին, ինչպես, ասենք, Պատմության կապը թարգմանական ու ինքնուրույն ուրիշ գեղարվեստական հուշարձանների, հայ բանահյուսության և մասնավորապես ժողովրդական վեպի հետ:

Առանձին հետաքրքրություն ունի վեպի հայկականացումը, ընդմիջարկված հատվածների հեղինակների, խմբագրողների աշխատանքը նյութի տեղայնացման ուղղությամբ և բազմաթիվ ուրիշ խնդիրների լուսաբանությունը:

Հուշարձանի տիպաբանական համակողմանի քննությունից հետո Հ. Սիմոնյանը անդրադառնում է հայկական խմբագրության ժանրային բնութագրին, աշխատելով որոշել Պատմության տեղը հայոց հին գրականության ժանրային համակարգում:

Վեպի անցած մեկուկես հազարամյա ճանապարհը հետագոտողը բաժանում է երկու հիմնական փուլի: Առաջինը (Ե-ԺԳ դդ.) «հայկական նախնական թարգմանության գոյության շրջան» է, երբ ընդհանուր առմամբ սակ համապատասխանում էր հունարեն բնագրին: Եվ եթե մինչև Հ. Սիմոնյանը այսպիսի բնագրի գոյությունը ենթադրվում էր միայն, ապա նրան հաջողվեց հայտարարել «բերդեմ ապացույցը», իր քննությամբ՝ Նախնական խմբագրությունը (Մաշտոցի անվ. մատենադարանի № 10151 ձեռագիրը, որ հնագույն է ընդհանրապես Պատմության մեզ հասած

գրչագրերից): Երկրորդ փուլն սկսվում է ԺԳ—
ԺԴ դարերում (Ռաչատուր Կեչառեցի) և իր
վերջնագծին հասնում ԺԶ դարում (Գրիգորիս
Աղթամարցի, Ջաքարիս Գնունեցի): Այս
նոր պարբերաշրջանը բնութագրվում է վեպի
տեղայնացումով, կամ, ինչպես հեղինակը կա-
սեր՝ հայկականացումով, երբ ձեռագրերում
հանդես են գալիս նորանոր արձակ ու չա-
փածո հավելումներ և, որ պակաս ուշագրավ
չէ, մանրանկարներ՝ նոր էջ բանալով հայ ար-
վեստի պատմության մեջ իբրև աշխարհակա-
նացման կարևոր խթան: Երկրորդ փուլում է,
որ ձեռագրերը բաժանվում են խմբերի, կրե-
լով համապատասխանաբար Ռաչատուր Կեչա-
ռեցու, Գրիգորիս Աղթամարցու և Ջաքարիս
Գնունեցու ստեղծագործությանց կնիքը, թե-
պետ Պատմության իրենց չափածո մեկնու-
թյունն ունեն նաև ուրիշ բանաստեղծներ (Հո-
վասափ Սեբաստացի): Ջարգացման այս ըն-
թացքում («գրուցատիպ երկից դեպի վիպա-
քնարական բնույթի յուրահատուկ ստեղծա-
գործություն՝ երգախառն վիպասանություն») մի
շարք հատկանիշներով Պատմությունը
«կանգնած է վեպի, իբրև ժանրի նախաշե-
մին»,— շեշտում է Հ. Սիմոնյանը:

Բայց այսքանով չի սպասվում վեպի հայե-
րեն թարգմանության «կենսագրությունը»: Երկ-
րորդ շրջանում (Հետագա խմբագրություն),
չափածո մեկնություններով (կաֆա) Համա-
ռոտ խմբագրություն, Վեպը նաև բանավոր
տարածում է գտնում, որ հետագայում գրի է
առնում Ներսես երեց Մեսրոպյանը: Այնու-
հետև դարձյալ չի թուլանում հետաքրքրույու-
նը Աղեքսանդրի պատմության նկատմամբ,
մինչև ԺԹ դար խմբագրման նոր փորձեր են
լինում (Հովհաննես Կարնեցի), վեպը հայե-
րեն է թարգմանվում արաբերենից և թուրքե-
րեն՝ հայերենից (հասկանալի է, դարձյալ հայ
մատենագրի ձեռքով): Հ. Սիմոնյանն իրա-
վամբ այդ հետաքրքրության դրսևորում է հա-
մարում նաև ձեռագրերում Վեպի զանազան
հատվածների՝ որպես ինքնուրույն գեղարվես-
տական գործերի առկայությունը հավաստող
փաստերը: «XVI դարից սկսած հրատարակ
են հանվում բնագրերից քաղված, երբեմն ան-
հատական մշակման քովով անցած հատվա-
ծական ընդօրինակումներ: Ստեղծվում են Վե-
պի տարբերակային կամ հատվածական հա-
մադրությանը շարահարված նոր բնագրեր և
այլն»,— կարդում ենք հրատարակության
Առաջաբանում:

Աղեքսանդրի պատմության լայն ժողովըր-
դականացման ճանապարհին շատ կարևոր
հանգամանք է այն, որ հայ մատենագիրները
քաջաժանոթ են այդ հուշարձանին: Վեպի
հետ կապված տարբեր երևույթներ, անձինք,
դրվագներ հիշատակվում են Ե—ԺԸ դարերի
մատենագիրների երկերում, հանգամանք, որ
քանիցս նկատվել է դեռևս անցյալ դարի հե-
տազոտություններում:

Հ. Սիմոնյանի աշխատանքի հաջողությունն
առաջին հերթին պայմանավորված է աղբյու-
րագիտական հիմքով: Տևական, համբերատար
շխատանք է պահանջվել մեզ հասած բո-
լոր ձեռագրերի համակողմանի քննության
համար, որով հնարավոր է դարձել տարբեր
խմբագրությունները հստակորեն զանազանելը
և հուշարձանի հայերեն թարգմանության, ու-
սումնասիրողի խոսքով ասած՝ «պատկանելի
կենսագրությունը» վեր հանելը, բնագրի ան-
ցած ուղու փուլերն առանձնացնելը: Այդ ճա-
նապարհով միայն հնարավոր էր պարզել փո-
քըր-ինչ ավելի դժվար որսալի մի երևույթ.
հանձարեղ գորավարի կերպարի նկատմամբ
հայ մարդու վերաբերմունքի էվոլյուցիան:
«Աղեքսանդրն ընկալվում էր և՛ իբրև պե-
տական-քաղաքական գործիչ, երազելի միա-
պետի անհրաժեշտ հատկանիշների մարմնա-
ցում, և՛ իբրև ժողովուրդներին պարսկական
լծից ազատագրող հերոս, և՛ իբրև գիտության
ու արվեստների հովանավոր, արձագանքելով
մտավորական մի ողջ խավի դավանած
փիլիսոփայական-քաղաքական մտահայեցու-
թյան»: Հայ հին գրականության հետևախորքի
վրա ներկայացնելով ու բնութագրելով Պատ-
մության զարգացման ուղին, Հ. Սիմոնյանը
շեշտում է նրա ժանրային բնութագրի փո-
փոխությունը՝ գրուցատիպ երկից վիպաքնա-
րական: Հետազոտողին զբաղեցնում են նաև
պետիկայի, ոճի ու լեզվի հարցերը:

Հ. Սիմոնյանը ցույց է տալիս, որ ԺԴ—ԺԶ
դարերում, թարգմանությանը հաջորդող փու-
լում, Ռաչատուր Կեչառեցին աշխատում է
Վեպը հարմարեցնել հայ ընթերցողի, ավելի
ճիշտ՝ ունկնդրի քիմքին, Գրիգորիս Աղթա-
մարցին կենսական նոր լիցք է հաղորդում
հազարամյա հուշարձանին, նրա մեջ մտծելով
նաև սիրո մտիվը, դրանով իսկ ուժեղացնե-
լով գեղարվեստական ներգործության ուժը:
Իսկ Ջաքարիս Գնունեցին բյուրեղացնում է
երկը թե՛ ձևի, թե՛ բովանդակության առումով:

Հիշված և ավելի շատ չհիշատակված խըն-
դիրներին Հ. Սիմոնյանն անդրադարձել է հրա-
տարակության ծանոթագրություններում: Վեր-
ջիններս շատ հաճախ ինքնակա փոքրիկ ու-
սումնասիրության տպավորություն են թող-
նում և երկու հիմնական նպատակ են հե-
տապնդում: Դրանց մի մասը ծառայում է
հայերեն բնագիրը, հատկապես հունալատի-
նականի հետ համեմատելով ճշտելուն, հայե-
րեն բնագրի այլևայլ հանգամանքներին: Ծա-
նոթագրությունների երկրորդ խումբը վերա-
բերում է այն տեղիներին, որոնց միջոցով
կարելի է ճշտել, վերականգնել հուշարձանի
հախճական բնագիրը: Սրանք մեծ մասամբ
այնպիսի տվյալներ են, որ չեն պահպանվել
հունարեն բնագրում, քայցև որոշակի է, որ
հայկական հավելում չեն, գալիս են սկզբնա-
տիպից: Յուրաքանչյուր քննարկման ժամա-
նակ հետազոտողն աշխատում է առավելա-

գույնս հիմնավորել, փաստարկել իր եզրակացությունները, հարկ եղած դեպքում կատարելով աղբյուրագիտական էքսկուրսներ, լեզվական վերլուծություններ:

Հ. Սիմոնյանի բազմամյա ուսումնասիրությունների արդյունքն ըստ էության Հայոց Աղեքսանդրականի հանրագիտարան է, ուր կառուցվածքային վերլուծությամբ, համեմատությունների, աղբյուրագիտական, բնագրագիտական, ձեռագրագիտական, գրականագիտական ու լեզվաբանական քննությամբ հիմնավոր ու համոզիչ պատասխան են սուսնում հարյուրավոր հարցեր, ավելի են ամբողջանում մեր պատկերացումները բոլոր այն մատենագիրների, բանաստեղծների մասին, որոնք այս կամ այն մասնակցությունն են ունեցել հելլենիստական դարաշրջանի նշանավոր հուշարձանի ազգայնացման գործում:

Աղեքսանդրի Պատմության գիտական հրատարակությունն ամփոփում է հայ բանասիրության շուրջ երկուհարյուրամյա դիտարկումների արդյունքները, նոր հորիզոն բանալով ուսումնասիրողի առջև: Առանձին հետաքրքրություն ունեն այն ընդհանրությունները, որ Ալատելի են Վեպի և հայ մատենագրության ու բանահյուսության այլևայլ ստեղծագործությունների միջև (Մովսես Խորենացու, «Սասնա ծռերից» մինչև Հովհ. Թումանյան): Այդպիսի մի առնչություն, օրինակ, ճշել է Հ. Սիմոնյանը. «Հայ կաֆայագիր հեղինակները... սեփական՝ ազգային բանահյուսական ավանդներով ջրային տարերքի հետ են կապում ոչ միայն ցլագլուխ երիվարի, այլև հենց իր՝ Աղեքսանդրի ծնունդը» (էջ 545):

Այս առնչությունները կարող են լինել տիպաբանական, ինչպես հեթանոսական կյանքի հետևյալ բնորոշ արտահայտությունն է: Մակեդոնացու գորականները սզում են նրա մահը. «Ո՛վ Աղեքսանդր, դու ահա լքանես, թողուս զմեզ: Կորեսա Մակեդոնիս ի բո վախճանելո: Լաւ էր մեզ մեռանել ընդ քեզ...» (էջ 445): Սա համեմատելի է, դիցուք, Խոր. Բ. կա («Մինչ դու գնացեր, և զերկիրս սմեանյն ընդ քեզ տարար, ես ատերակսց ո՛մ թագաւորեմ»): Բայց ընդգծված տողը կարծես նույնությամբ կրկնում է Դավթակ Քերթողն իր Ողբի մեջ. «... բայց քաղցրագոյն ևս՝ ընդ քեզ մեռանել»:

Գրիգոր Նարեկացին գրել է լվերի մասին նշանավոր հատվածը Մատենանում (Բան ԿԹ, ք): Եվ հնարավոր է, որ դա ներշնչած լինի համանման կաֆայի հորինումը (էջ 255):

Թերևս ավելի ուշագրավ է Աղեքսանդրի հիվանդության առթիվ իր իսկ ողբը [«Բերան իմ և լեզու ևս երկթերթի... որ և վարդ ի շրթանցս հոսեր» (352), կամ՝ «բանեղեն և կորովամիտ կոկոզմանց...» (353)]. որ մի դեպքում հիշեցնում է Գրիգոր Նարեկացուն, մյուս դեպքում՝ Գրիգոր Մագիստրոսին և ըստ էության երկրորդական է՝ բնագրիցն է՝ զըրանք, թե հայ խմբագիրների հավելում:

Առանձին ուշադրության է արժանի Վեպի բառապաշարն ընդհանրապես և մասնավորաբար այն եզրույթները, բառերն ու կապակցությունները, որոնք վերաբերում են մատենագրությանը, գրական հարընթացին, գրականության (նաև երաժշտության) տեսակներին («հանդէս լինի խաղալկաց ամենայն երգոց արուեստականաց» — էջ 119, «ներքնագիրս այս նուիրական մեհենային գրուլք» — 133, «ստակ սունեմ» — 160, «քերթաբանող քերական» — 164, «տաղս հումերակ» — 165, «փողոյն նսագարն երգոց» — 189, «մակաղբական վիպասանութեանց» — 353, «բաշապատում և անսխալ դպիրք» — 360 և այլն):

Հայ մատենագրության մեջ հազվագյուտ հանդիպող հետևյալ բառաձևերը ևս ուշագրավ են, քանի որ առատորեն գործածված են Վեպի հայ թարգմանության մեջ, և չի կարելի դրանք պատահականություն կամ վրիպում համարել. աստուածուրհայ, աստուածուրհեայ (178), աստուածուրհին (180), ամենուրհեայ (242), ամենուրհաց (324), ամենուրհայ (359) ևն (բոլորը՝ Ա բնագրից):

Վեպի ԾԾԹ (դարձյալ Ա բնագիր) հատվածն սկսվում է այսպիսի ճակատադրությամբ. «Է՛ Դկլաթ մեծ գետ և Արածանի ի Մեղրագետս և ի Բաբելոնի, որք հոսին ի Նեղոս գետ...»: Այստեղ Նեղոսը տեղափոխված է Միջագետք, մի շփոթություն, որ տեսնում ենք նաև հայ մատենագրության մեջ, ասենք, Սիմեոն Լեհացու «Ուղեգրութեան» [10. Վերադարձ Կոստանդնուպոլիս] գլխի վերջում:

Ավելորդ չէ, թերևս, ուշադրություն դարձնել այն իրողությանը, որ ծառերը «արտասար ունեին իբրև զպարսիկք ստաքտիկէ» (էջ 257): Դժբախտաբար հնարավորություն չունենք այս հատվածը համեմատելու այլպեզու խմբագրությունների հետ, բայց մեզ ընդունելի չի թվում Հ. Տաշյանի նկատումը (էջ 581), թե հունարեն բնագրի «թզենուց կաթած» ընթերցվածը անիմաստ է: Նախադասությունը կիմաստավորվի, եթե ասենք՝ «ինչպես թզենուց կաթած». արցունքի ընկնելը թզի կաթելուն է նմանեցվում: Ընդհակառակն, գրաբարի մեջ անհասկանալի է «զպարսիկք» ձևը, որ շարահյուսորեն չի կապվում հարևան բառերին, մանավանդ որ հունարենում ոչ թե ստաքտիկ է, այլ ստակունէ: Կաթող թուզը Մերձավոր արևելքում սիրված համեմատություն էր, և Խորենացին (Գ, խ) թզի այդ կաթելուն նմանեցնում է ամրոցի պարսիպներից թափվող դիերը (հմտ. Ես. ԻԸ, 4): Բայց ավելի հավանական է նկատի առնված լինի այն, որ թզենին նաև առատության նշան էր, և կարող էր Վեպում այս իմաստով գործածվել:

Ծանոթագրությունների մեջ կարելի է զըտնել վիճելի լուծումներ, առարկություն հարուցող սվնդումներ, մատնանշել ինչ-ինչ երկրորդական թերություններ, անհաջող ձևակեր-

պումներ, որոնք չեն կարող ստվեր գցել կատարված աշխատանքի վրա:

Հայոց իրականության մեջ Վեպի անցած ճանապարհի պարբերացումը թերևս կարելի է սրբագրել, երկուսի փոխարեն ընդունելով երեք փուլ. Ա) Ե—ԺԳ դարեր (Հ. Սիմոնյանի ձևակերպումով՝ Նախնական բնագիր). Բ) ԺԴ—ԺԶ դարեր, գործում միջամտության շրջան, երբ գրվում են չափածո և արձակ ընդմիջարկությունները. Գ) ԺԵ—ԺԹ դարեր, երբ կորագիծը ներքև է հակվում, բայց չի մարում հետաքրքրությունը Վեպի նկատմամբ, ստեղծվում են նոր թարգմանություններ, խմբագրություններ (նաև բանահյուսական տարբերակ):

Թեպետ համոզիչ են Մովսես Խորենացուն Վեպի թարգմանիչ համարելու օգտին խոսող փաստերը, կարծում ենք, այնուամենայնիվ, պետք չէ անվերապահորեն նրան վերագրել այդ գործը: Առավել ևս չի կարելի վստահորեն պնդել, թե Խորենացին Աղեքսանդրի պատմությունը թարգմանել է մոտավորապես 70-ամյա հասակում, երբ Սահակ Բագրատունին խնդրեց գրել «Հայոց պատմությունը», այսինքն՝ Ե դարի 80-ական թվականներին:

Իբրև անհաջող ձևակերպման, ավելի ճիշտ անհաջող բառօգտագործման օրինակ կարելի է հիշել քննական հրատարակության Առաջաբանի խոսքը, որի համաձայն ԺԷ—ԺԹ դարերում «հանդես են գալիս նյութի անհատական մշակումներ՝ նորագույն խմբագրություններ, հավաստելով, որ օտար հուշարձանը սեփականելու դարավոր փորձը դեռ իր լինելության մեջ է» (էջ 2, ընդգծումը մերն է): Հասկանալի է, անշուշտ, խոսքը իրացման, տեղայնացման (և բնավ ոչ սեփականելու) մասին է:

Այս կարգի նկատողությունները, ինչպես սուսցինք, չեն ստվերում կատարված գնահատելի աշխատանքը և նսեմանում են ուսումնասիրության բազում արժանիքների կողքին: Հայ թարգմանական գրականության կոթողներից մեկը մատուցվել է ընթերցող հասարակայնությանը արժանավոր մի հրատարակությամբ: Դա կարևոր նվաճում է նաև շնորհանդրապես հելենիստական այս հուշարձանի ուսումնասիրության բնագավառում:

Ա. Ա. ԽՈՒՎԱՎԵՐԴՅԱՆ

Պ. Մ. Պողոսյան, Խոսի մշակույթի և ռեազիտության հիմունքներ. Երևանի համալսարանի հրատարակչություն, գիրք Ա, 1990 թ., 423 էջ, գիրք Բ, 1991 թ., 335 էջ:

Ռեազիտությունը և առավել ևս՝ խոսքի մշակույթի հիմունքները համեմատաբար երիտասարդ գիտաճյուղ է լեզվաբանական գիտությունների համակարգում, բայց, արդեն երկար տարիներ է, ինչ որպես ուսումնական դասընթաց դասավանդվում է բուհերի բանասիրական բաժիններում: Դեռ ավելին՝ վերջին տարիներին փոքր ժամաքանակով ռեազիտության առանձին բաժիններ ուսուցանվում էին նաև միջնակարգ դպրոցի քարձր դասարաններում: Հատկապես 80-ական թվականներից ի վեր ռեազիտության, մասնավորապես գեղարվեստական գրականության և առանձին հեղինակների լեզվի և ոճի, նրանց խոսքարվեստի մասին գրվել են ուշագրավ մեծագրություններ, ուսումնասիրություններ, բարարան-տեղեկատուներ, բայց և այնպես անլիճելի է, որ այս ուղղությամբ հայ լեզվաբանները դեռևս շատ անելիքներ ունեն տեսական մի շարք հարցերի ուսումնասիրության ու պարզաբանման, դասադրերի և ուսումնական ձեռնարկների ստեղծման գործում:

Այս բացը զգալիորեն լրացնում է Պ. Պողոսյանի ուսումնասիրությունը, որ հաճճարարվում է որպես ուսումնաստանողակ ձեռնարկ բանասիրական ֆակուլտետների ուսանողությանը: Ցավոք վաղաժամ մահը թույլ չտվեց աշխատության հեղինակին տեսնելու իր երկարամյա ու տքնաճան աշխատանքի ամբողջական ու ավարտուն արդյունքը:

Պ. Պողոսյանը հայ լեզվաբանության անխոնջ մշակներից էր, որը զգալի ներդրում ունի հայոց լեզվի քերականության, մասնավորապես խոսքի մշակույթի և ճարտասանական արվեստի ուսումնասիրության բնագավառում: Նա սկզբունքային, ինքնատիպ մտածողության տեր գիտնական էր, փորձված և բարեխիղճ մանկավարժ, խստապահանջ՝ նախ և առաջ իր գիտական ուսումնասիրությունների նկատմամբ, որի վկայությունը նաև սույն երկհատորանոց աշխատությունն է:

Առաջին գրքի ներածական մասում զգալի տեղ է հատկացվում Հայաստանում ճարտասանական արվեստի զարգացման պատմությանը, մասնավորապես վկայակոչվում են դեռևս Տիգրան Մեծի ժամանակներից հայտնի հայ ճարտասաններ Տիգրանի որդի Արտավազը, Տիրանը, որը նաև հմուտ քերական էր և Ցիցերոնի գնահատմամբ՝ «ժամանակին իր գիտության համար բարձր պատվի արժանի մարդ»:

Ճարտասանությունը հայոց դպրոցներում լայն տարածում է ստացել Ե դարի սկզբներին, երբ հայերն արդեն ունեին նշանավոր հոկտորներ և ճարտասանության ճանաչված տեսաբաններ, ինչպիսիք էին Մովսես Խորենացին, որը հայտնի էր արդեն ճարտասանության նախակրթության իր ձեռնարկով